ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
(Պ-1370-17.06.2026-ՊԻ-011/0)
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
(Պ-1370[1]-17.06.2026-ՊԻ-011/0)
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
(Պ-1370[2]-17.06.2026-ՊԻ-011/0)
«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
(Պ-1370[3]-17.06.2026-ՊԻ-011/0)
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Համայնքային	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Համայնքային ծառայության	Ընդունվել է: Նախագծերը հանվել են փաթեթից, իսկ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ	Ընդունվել է:

		ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր	մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝ Նախագծերով առաջարկվող՝ ընտրակաշառք ստանալու, ընտրակաշառք տալու, ընտրակաշառքի միջնորդության, ինչպես նաև հանրաքվեի կամ ընտրության ընթացքում բարեգործության արգելքը խախտելու համար դատապարտված անձանց կողմից պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնելու	կատարելու մասին» օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ	

			սահմանափակմանը վերաբերող կարգավորումները կարող են դիտարկվել որպես ոչ բավարար չափով հիմնավորված և առաջացնել լուրջ հարցեր իրավական որոշակիության, համաչափության, ինչպես նաև գործող օրենսդրական համակարգի ներքին համահունչության տեսանկյունից: Քրեական պատասխանատվության իրավական հետևանքի՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից պաշտոնի նշանակման համար նախատեսվող արգելքի «մշտականացումը» հակասում է վերասոցիալականացման սկզբունքին, ըստ որի՝ պատժի կրումից, ինչպես նաև		

			դատապարտման իրավական հետևանքների մարումից կամ վերացումից հետո անձը պետք է հնարավորություն ունենա վերականգնելու իր քաղաքացիական և քաղաքական իրավունքների լիարժեք իրականացումը՝ որպես ժողովրդավար հասարակությունում քաղաքական մասնակցության անբաժանելի տարր: Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ եվրոպական քրեական իրավունքում պետական կամ ընտրական պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկումը՝ ընտրակաշառքի կամ ընտրական «բարեվարքության» խախտումների համար դատապարտման հետևանքով, դիտարկվում է որպես		

			քրեական իրավունքի ծանր, սակայն ժամանակային առումով սահմանափակ կամ վերականգնման ենթակա լրացուցիչ իրավական հետևանք, ոչ թե որպես անժամկետ քաղաքացիական բացառման միջոց: Չնայած նման հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությանը՝ դրանց իրավական հետևանքները եվրոպական իրավակարգերում հիմնականում կառուցված են համաչափության և վերականգնման սկզբունքների վրա՝ նախատեսելով կամ հստակ ժամկետային սահմանափակումներ, կամ դատական վերացման, մարվածության կամ		

			ռեաբիլիտացիայի միջոցով վերականգնման հնարավորություն (Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Իտալիա): **Իտալիայում,** որպես համեմատաբար խիստ մոտեցում ունեցող համակարգ՝ հատկապես կոռուպցիոն հանցագործությունների նկատմամբ կիրառվող քրեական և հարակից իրավական հետևանքների տեսանկյունից, ռեաբիլիտացիան (riabilitazione) հանդիսանում է իրավունքների վերականգնման հիմնական մեխանիզմը: Այսպես, դատապարտման լրացուցիչ հետևանքները կարող են պահպանվել երկարացված ժամկետով՝ դրանց մարման կամ		

			վերացման իրավական հնարավորության հետաձգմամբ[1]: **Գերմանիայում** պետական պաշտոն զբաղեցնելու կամ ընտրական իրավունքների սահմանափակումը գործում է օրենքով սահմանված որոշակի ժամկետի շրջանակում և որոշ դեպքերում կարող է վաղաժամ վերականգնվել դատական կարգով[2]: **Լեհաստանում** ընտրական կոռուպցիոն հանցագործությունների համար կարող է կիրառվել հանրային իրավունքներից զրկում, սակայն միաժամանակ գործում է դատվածության մարվածության (zatarcie skazania) ինստիտուտը, որի		

[1] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.normattiva.it/esporta/attoCompleto?atto.dataPubblicazioneGazzetta=1930-10-26&atto.codiceRedazionale=030U1398 , Իտալիայի քրեական օրենսգիրք, 179-րդ հոդված:

[2] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.gesetze-im-internet.de/stgb/ Գերմանիայի քրեական օրենսգիրք, 45-րդ հոդված:

			արդյունքում դատապարտման իրավական հետևանքները վերացվում են, և անձը վերականգնում է իր քաղաքացիական-իրավական կարգավիճակը: **Ֆրանսիայում** քաղաքացիական իրավունքների սահմանափակումները և անընդունելիության միջոցները կարող են կիրառվել որպես լրացուցիչ պատիժներ, սակայն դրանք ենթակա են դատական վերացման (relèvement)[3]: Միաժամանակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2025թ. նոյեմբերի 30-ի Ղրղզստանի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ		

[3] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legifrance.gouv.fr/codes/texte_lc/LEGITEXT000006070719/ Ֆրանսիայի քրեական օրենսգիրք, Բաժին 4, հոդվածներ՝ 133-12 - 133-17:

			զեկույցում[4] ընդգծել է, որ թեկնածու առաջադրվելու սահմանափակումների ընդլայնումը՝ ներառյալ մարված կամ վերացված դատվածությունների վրա հիմնված արգելքները, լուրջ մտահոգություններ է առաջացնում համաչափության տեսանկյունից: Հղում անելով Վենետիկի հանձնաժողովի չափանիշներին (Code of Good Practice in Electoral Matters, 2002, I.1.1.d.iv[5]) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նշել է, որ նման սահմանափակումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա և չպետք է հանգեցնեն քաղաքական մասնակցությունից անհամաչափ		

[4]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://odihr.osce.org/sites/default/files/documents/official_documents/2025/12/KG%20Early%20Parliamentary%202025_PS_01.12.2025.pdf?utm:
[5]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ Code_conduite_PREMS 026115 GBR.pdf:

			կամ փաստացի մշտական բացառման: Վերոգրյալի հիման վրա՝ առաջարկում ենք դիտարկել քրեաիրավական կարգավորումների միջոցով Նախագծի հիմքում դրված գաղափարի իրացման հնարավորությունը:		
2.	**Կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	ՀՀ քրեական օրենսգրքի գործող կարգավորումներով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել որպես լրացուցիչ պատիժ, եթե դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարման կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած	Ընդունվել է: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում անձի կողմից հետագայում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այսպիսով, նշված լրացուցիչ պատժի նշանակումը, որպես ընդհանուր կանոն, թողնված է դատարանի հայեցողությանը: Միաժամանակ, որոշ հանցագործություններ բնույթը վկայում է ոչ միայն տվյալ արարքի հանրային վտանգավորության, այլև այն մասին, որ անձի կողմից որոշակի ոլորտում գործունեության իրականացման շարունակակությունը կարող է վտանգել համապատասխան հասարակական հարաբերությունների բնականոն զարգացումը, խաթարել այդ ոլորտի		

			նկատմամբ հանրային վստահությունը և նպաստել նույնաբնույթ նոր իրավախախտումների կատարմանը: Նշված դեպքերում միայն հիմնական պատժի նշանակումը բավարար չէ քրեական պատասխանատվության նպատակների լիարժեք իրագործման համար, հետևաբար՝ անհրաժեշտ է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը քրեական օրենքով նախատեսել նաև որպես պարտադիր լրացուցիչ պատիժ: Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն սահմանադրական իրավունքների և ազատությունների		

			դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունները, մասնավորապես՝ ընտրական իրավունքների իրականացման և ընտրական գործընթացների բնականոն կազմակերպման դեմ ուղղված հանցագործությունները: Ընտրակաշառք ստանալը, ընտրակաշառք տալը, ընտրակաշառքի միջնորդությունը, ինչպես նաև ընտրության կամ հանրաքվեի ժամանակ բարեգործության արգելքի խախտումը ոտնձգում են ոչ միայն ընտրական իրավունքի իրականացման սահմանված կարգի, այլև ժողովրդավարական պետության հիմնարար արժեքների՝ ազատ և արդար ընտրությունների, ընտրական գործընթացների օրինականության,		

			թափանցիկության և հանրային վստահության նկատմամբ: Նշված հանցագործությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք անմիջականորեն կապված են ընտրական գործընթացների կազմակերպման, իրականացման կամ դրանց արդյունքների վրա ապօրինի ազդեցություն գործադրելու հետ: Հաշվի առնելով, որ այդպիսի արարքներով ոտնձգություն է կատարվում պետական իշխանության ձևավորման ժողովրդավարական գործընթացների և ընտրական համակարգի նկատմամբ հանրային վստահության նկատմամբ, հիմնավորված է նաև դրանց իրավական հետևանքները դիտարկել հանրային իշխանության		

			իրականացման տեսանկյունից: Այս համատեքստում, հարկ է նկատի ունենալ, որ հանրային պաշտոններն ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնց շրջանակներում իրականացվում են հանրային իշխանության լիազորություններ և ընդունվում են իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ, իսկ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք իրականացնում են հանրային նշանակություն ունեցող գործառույթներ: Հետևաբար, նման հանցագործություն կատարած անձի կողմից հետագայում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելը		

			կարող է վտանգել հանրային իշխանության և հանրային ծառայության նկատմամբ վստահությունը՝ հաշվի առնելով, որ այդ պաշտոնները ենթադրում են հանրային նշանակություն ունեցող լիազորությունների իրականացում և իրավական հետևանքներ առաջացնող որոշումների կայացում: Այս համատեքստում, անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել այնպիսի քրեաիրավական ներգործության միջոցներ, որոնք, բացի կատարված հանցանքի համար պատժելուց, ուղղված կլինեն նաև հանրային իշխանության նկատմամբ վստահության ամրապնդմանը, ինչպես նաև ընտրական հարաբերությունների		

			հետագա պաշտպանությանը: Այդ նպատակով հիմնավորված է ընտրական հանցագործությունների համար որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախատեսել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ: Հարկ է նաև նշել, որ որոշակի հանցագործությունների համար լրացուցիչ պատժի պարտադիր նշանակման մոտեցումը նոր չէ հայրենական քրեական օրենսդրության համար: Մասնավորապես, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունվել ՀՀ քրեական նախկին օրենսգրքով մի շարք հանցագործությունների համար որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի		

			գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախատեսված էր որպես պարտադիր լրացուցիչ պատիժ, որպիսի գործիքակազմով օրենսդիրը, ելնելով որոշ հանցագործությունների բնույթից և պաշտպանվող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններից, սահմանափակել էր դատարանի հայեցողությունը լրացուցիչ պատժի նշանակման հարցում: Այսպիսով, ելնելով վերոգրալից՝ գտնում ենք, որ Նախագծի հիմնավորմամբ բարձրացված խնդիրների լուծումները կարող են իրացվել ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ		

			կատարելու միջոցով: Մասնավորապես, անհրաժեշտ է՝ • Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 57-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով կարող է նախատեսվել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ:»: • Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը «հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի		

			պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը,» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքի, երբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես պարտադիր լրացուցիչ պատիժ» բառերով: • Օրենսգրքի 218-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ		

			ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։»։ 2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով։»։ • Օրենսգրքի 219-րդ հոդվածում՝		

			1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»: 2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝		

			առավելագույնը հինգ տարի ժամկետով:»: • Օրենսգրքի 220-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»: 2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով		

			հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»: • Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»		